«22» ապրիլ 2025թ.

Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ.

1. Դաստիարակ 1,17 դրույքաչափ
2. ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչ 1 դրույքաչափ
3. Երաժշտության դաստիարակ 0,5 դրույքաչափ

🔴Դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

🔴ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:

🔴Երաժշտության դաստիարակի որակավորման պահանջները՝
միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց):

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ-ի փետրվարի 17-ի N08-Ն հրամանի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 22-ից մայիսի 22-ը ներառյալ
9:00-17:00 ք. Էջմիածին, թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր-մանկապարտեզ կամ Վաղարշապատի համայնքապետարան:

Մրցույթները տեղի կունենան Վաղարշապատի համայնքապետարանի կրթության և մշակույթի բաժնում:

Դաստիարակի մրցույթ՝ մայիսի 27, ժամը՝ 11:00:

Երաժշտության դաստիարակի մրցույթ՝ մայիս 27, ժամը՝ 14:00:

ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի մրցույթ՝ մայիս 27, ժամը՝ 16:00:

Հարցերի դեպքում զանգահարել 094-10-59-56 հեռախոսահամարով: